

Ֆոկուս խմբային քննարկումներ Սևան և Հրազդան համայնքներում

2019 թվականի ապրիլին «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում հանդիպումներ տեղի ունեցան Սևան և Հրազդան համայնքերում: Հանդիպումների հիմանկան նպատակը ֆոկուս խմբային քննարկումների անցկացումն էր վերը նշված համայնքերի ՀԿ ներկայացուցիչների , ակտիվիստների, ընտանիքների ներկայացուցիչների հետ:

Ինչպես արդեն գիտենք, «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում իրականացվող ֆոկուս- խմբային քննարկումների բուն նպատակն է վեր հանել Սոցիալական աջակցության օրենքով նախատեսված չափանիշների իրականացման առանձնահատկությունները:

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն (ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և ընտանիքների սոցիալական խնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղված մեխանիզմների բարելավմանը, մշակելով բարելավման առաջարկություններ: Ծրագրի իրականացման աշխարհագրությունն է ՀՀ Լոռու (Ալավերդի), Տավուշի (Դիլիջան), Գեղարքունիքի (Սևան) և Կոտայքի (Հրազդան) մարզերը:

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիրն իրականացվում է «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Իրավաբանների հայկական ասոցացիա» ՀԿ ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:

1 / 2

Ֆոկուս խմբային քննարկումներ Սևան և Հրազդան համայնքներում

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

2 / 2